

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
վիճակագրության պետական խորհրդի նիստի

30.01.2014թ.

ժ.14: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Գ. Թորոսյան (տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ), Կոյունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Հ. Հակոբյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ), Ա.Գյուրջյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում վեց հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

2. «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 41-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

3. «Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22- եվ 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված պրոֆեսիոնալ էթիկայի հոչակագիրը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում կիրառելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 11-ից 15-ը «Տետրա Տեկ Ի Էս Ինկ.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի և Էներգետիկայի բնագավառում ճարտարագետների ասոցիացիայի (AEE) կողմից կազմակերպված «Չափման և ստուգման հավաստագրված մասնագետների ծրագրի» տարածաշրջանային ուսուցողական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա. Գյուրջյան, Հ. Հակոբյան /

4.2. Հաղորդում՝ Կորեայի Տեջոն քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 2-ից 6-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական վիճակագրական ինստիտուտի (SIAP) կողմից կազմակերպված «Կենսական (բնական շարժի) վիճակագրության արտադրությունը և օգտագործումը, կենսական տվյալներից դեպի վիճակագրական աղյուսակավորում» խորագրով 2-րդ տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյունջյան/

4.3. Հաղորդում Շվեդիայի Նորշոպինգ, Ստոկհոլմ քաղաքներում 2013 թվականի դեկտեմբերի 11-ից 13-ը Շվեդիայի միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման և դրանց վերլուծությունների իրականացման փորձին, ինչպես նաև այդ նպատակով կիրառվող գործիքակազմին ծանոթանալու, Շվեդիայում միգրացիոն տեղաշարժերի գրանցման և միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման ու վերլուծության հարցերով զբաղվող կառույցների գործառույթները, այդ կառույցների կարողություններն ու հմտությունները ուսումնասիրելու նպատակով այցելության վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

5. «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

6. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովևարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

/Բովևարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 41-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/

Որոշեցին՝

ուժը կորցրած ճանաչել «Ուղևորների և բեռների ավիափոխադրումներն ըստ քաղաքների» Ձև 11-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև 41-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «ՀՀ ՎՊԽ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 13-Ն», և «ՀՀ ՎՊԽ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 25-Ն» որոշումները:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22- ել 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագիրը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում կիրառելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

1. վիճակագրության բնագավառում պրոֆեսիոնալ արժեքները և փորձը ուղղորդելու նպատակով, իր գաղափարական համակարծրությունն արտահայտել Միջազգային Վիճակագրական ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22 և 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրին (այսուհետ՝ Հռչակագիր), և այն կիրառել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գործունեությունում:

2. առաջարկել Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտներին առաջնորդվել Հռչակագրով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին:

4.1. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2013 թվականի նոյեմբերի 11-ից 15-ը «Տետրա Տեկ Ի Էս Ինկ.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի և Էներգետիկայի բնագավառում ճարտարագետների ասոցիացիայի (AEE) կողմից կազմակերպված «Չափման և ստուգման հավաստագրված մասնագետների ծրագրի» տարածաշրջանային ուսուցողական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա. Գյուրջյան, Հ. Հակոբյան /

4.2. Հաղորդում՝ Կորեայի Տեչոն քաղաքում 2013 թվականի դեկտեմբերի 2-ից 6-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական վիճակագրական ինստիտուտի (SIAP) կողմից կազմակերպված «Կենսական (բնական շարժի) վիճակագրության արտադրությունը և օգտագործումը, կենսական տվյալներից դեպի վիճակագրական աղյուսակավորում» խորագրով 2-րդ տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյումջյան/

4.3. Հաղորդում՝ Շվեդիայի Նորշոպինգ, Ստոկհոլմ քաղաքներում 2013 թվականի դեկտեմբերի 11-ից 13-ը Շվեդիայի միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման և դրանց վերլուծությունների իրականացման փորձին, ինչպես նաև այդ նպատակով կիրառվող գործիքակազմին ծանոթանալու, Շվեդիայում միգրացիոն տեղաշարժերի գրանցման և

միգրացիայի վիճակագրական տվյալների հավաքագրման ու վերլուծության հարցերով զբաղվող կառույցների գործառույթները, այդ կառույցների կարողություններն ու հմտությունները ուսումնասիրելու նպատակով այցելության վերաբերյալ:
/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն
/Անհատական/
/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

5. «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

հաստատել «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և հարցաթերթի լրացման մեթոդական ցուցումները» համաձայն հավելվածի:
/Անհատական/
/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ